ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 02/14/7806-18 " 31. 10. 2018 թ.

«ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ (ՀՎՀՀ 04226514) տնօրեն

ՊՐՆ Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 8

Էլ. հասցե՝ argohshin@mail.ru

ՀՀ մշակույթի նախարարության և «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի մարտի 19-ին կնքված N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/19» ծածկագրով պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) համաձայն Ձեր կողմից պետք է իրականացվեին պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արարատի մարզի Լուսառատ համայնքի Արտաշատ քաղաքատեղիի բաղնիքների և խճանկարների ամրակայման (թանգարանացման) և մասնակի վերականգնման 2018թ նախատեսվող աշխատանքները:

Պայմանագրի 1.3 կետի և N 2 Հավելվածով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը սահմանված էր՝ 01.11.2018 թ.:

ՀՀ մշակույթի նախարարության 2018 թվականի սեպտեմբերի 3-ի N 03/14.1/5918-18 գրությամբ Ձեզ տեղեկացվել էր, որ այդ օրվա դրությամբ որևէ աշխատանք չի իրականացվել Հայաստանի պատմության թանգարանում (հանված և վերականգնված խճանկարե հատակի թանգարանում ցուցադրման տարածքի կազմակերպման մասով), իսկ սահմանամերձ տարածք մուտք գործելու համար

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: (010, 011) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,
0010, Ереван, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am

(բաղնիքների ամրակայման աշխատանքների մասով)՝ Ձեր կողմից չեն ներկայացվել աշխատակիցների անձնագրային տվյալները և հայտնվել էր, որ առաջիկայում սեղմ ժամկետներում աշխատանքները չսկսելու դեպքում ՀՀ մշակույթի նախարարության կողմից միակողմանի կլուծվի պայմանագիրը:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի ա) ենթակետի պահաջները՝ ՀՀ մշակույթի նախարարությունը 2018 թվականի հոկտեմբերի 31-ին միակողմանի լուծում է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամը որպես տուգանք՝ պայմանագրի 6.3 կետի համաձայն (պայմանագրի 5.1 կետում նախատեսված պայմանագրի ընդհանուր գնի 0.5 տոկոսը):

Միաժամանակ հիմք ընդունելով Ձեր կողմից 13.03.2018 թ. ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի (պայմանագրի կատարման ապահովում) 1.3 կետը՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը):

31.10.2018

X

Հարգանքով՝
Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Подписано: Ekeng CJSC

Կատարող՝
Ս. Գևորգյան
Հեռ.՝ 011-58-58-51
Ն. Կարապետյան
Հեռ.՝ 011-58-51-78

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: (010, 011) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,
0010, Ереван, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am